ՆԱԽԱԳԻԾ

Կ-1337[5]-21.04.2026-ԳԿ-011 ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում լրացնել 8.5.1.3-րդ և 8.5.2.4-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«**8.5.1.3** նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացման համար (մինչ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած և աստիճանաբար ներդվող, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված արհետագործական կրթական ծրագրի մակարդակում տվյալ որակավորման շրջանակային նկարագիրը հաստատելը)	բազային տուրքի 30-ապատիկի չափով
«**8.5.2.4** միջին կրթական ծրագրի իրականացման համար (մինչ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած և աստիճանաբար ներդվող, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված միջին մասնագիտական կրթական ծրագրի մակարդակում տվյալ որակավորման շրջանակային նկարագիրը հաստատելը)»:	բազային տուրքի 150-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: